ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ N 1
N ՇՀԱՊՁԲ-7/40-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան **29.09.2014թ.**

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Գնորդ, մի կողմից և «ԷՐԻԶ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա.Ասլանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Վաճառող, մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր՝ հիմք ընդունելով 18.07.2014թ. կնքված N ՇՀԱՊՁԲ-7/40-4 գնման Պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 9.2 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն փոփոխությունը (այսուհետև՝ Փոփոխություն) հետևյալի մասին.

1. Փոփոխության առարկան

1.1 Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և *«Ճաշարաններում օգտագործվող սարքեր (էլեկտրական կաթսա 160լ.-ոց)»* և *«Ճաշարաններում օգտագործվող սարքեր (էլեկտրական կաթսա 250լ.-ոց)»* ապրանքատեսակների քանակներն ավելացնել՝ յուրաքանչյուրը 3 հատով՝ դրանց մատակարարման ժամկետ սահմանելով 2014թ. 4-րդ եռամսյակը: Սույն փոփոխությամբ նախատեսված ապրանքանտեսակներիի միավորի գները մնում են անփոփոխ և կազմում են համապատասխանաբար՝ 1 698 000 դրամ և 1 797 000 դրամ: Սույն փոփոխության արդյունքում Պայմանագրի գինը ավելանում է 10 485 000 դրամով և կազմում է 68 454 780 (վաթսունութ միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր ութսուն) դրամ: Վճարումը կիրականցվի պայմանագրով նախատեսված կարգով, 2014թ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Փոփոխությունն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

2.2 Սույն Փոփոխության մեջ չնշված՝ Կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքները և պարտականությունները, Ապրանքի հանձման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն Փոփոխությունը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 1 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷՐԻԶ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Նաիրի Զարյան 24
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«ՊրոԿրեդիտ Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 90001114078	Հ/Հ 25300002198500 10
ՀՎՀՀ 00863411	ՀՎՀՀ 00089186
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Ա.ԱՍԼԱՆՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՇՀ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան, Բագրևանդի 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12–ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-7/40» ծածկագրով ՇՀ ընթացակարգի արդյունքում 2014թ-ի հուլիսի 18-ին կնքված N ՇՀԱՊՁԲ-7/40-4 ծածկագրով պայմանագրում (այսուհետև՝ Պայմանագիր) 2014թ-ի սեպտեմբերի 29-ին կատարված փոփոխության (այսուհետև՝ Փոփոխություն) վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Պատվիրատուի մոտ առաջացել է «Ճաշարաններում օգտագործվող սարքեր (Էլեկտրական կաթսա 160լ.-ոց)» և «Ճաշարաններում օգտագործվող սարքեր (Էլեկտրական կաթսա 250լ.-ոց)» ապրանքատեսակների լրացուցիչ քանակների ձեռքբերման անհրաժեշտություն:

Փոփոխության նկարագրություն: Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին Պայմանագրում կատարել փոփոխություն և «Ճաշարաններում օգտագործվող սարքեր (Էլեկտրական կաթսա 160լ.-ոց)» և «Ճաշարաններում օգտագործվող սարքեր (Էլեկտրական կաթսա 250լ.-ոց)» ապրանքատեսակների քանակներն ավելացնել՝ յուրաքանչյուրը 3 հատով՝ դրանց մատակարարման ժամկետ սահմանելով 2014թ. 4-րդ եռամսյակը: Սույն փոփոխությամբ նախատեսված ապրանքանտեսակներիի միավորի գները մնում են անփոփոխ և կազմում են համապատասխանաբար՝ 1 698 000 դրամ և 1 797 000 դրամ: Սույն փոփոխության արդյունքում Պայմանագրի գինը ավելանում է 10 485 000 դրամով և կազմում է 68 454 780 (վաթսունութ միլիոն չորս հարյուր հիսունչորս հազար յոթ հարյուր ութսուն) դրամ: Վճարումը կիրականցվի պայմանագրով նախատեսված կարգով, 2014թ 4-րդ եռամսյակում, բայց ոչ ուշ, քան 25.12.2014թ:

Փոփոխության հիմնավորում: Սույն փոփոխություն կատարվում է՝ հիմք ընդունելով Պայմանագրի 9.2 կետը: Սույն փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշման 71-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին: Պայմանագրում նման փոփոխություն կատարվում է առաջին անգամ և ավելացվող քանակները չեն գերազանցում Պայմանագրի գնի 20 տոկոսը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ՏՎ և ԳՓՁ վարչության գլխավոր մասնագետ Ռ. Մարդոյանին:

Հեռախոս՝ 010-29-44-99:

Էլ. փոստ՝ r.mardoyan@mil.am:

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն: